

ոգ զիտէ : — ԷՇ լոյս , կամ պոյնդ փոխէ  
կամ անունդ :

ՀԱՅԻ ԽՈՏ ՑԱՆՔԻ

ԶԱՅԻՆՅԻԱ և ՆՈՅԵՄՐԵՐԻ



## ՍՈՒՐՃԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԱՂԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. Մ- ԽՈՐԵՆԱՅԻՆ ԵԿ ԿՈՐԵԱՆ ԳՐՈՅ ՄԵԶ  
ԳՏՆՈՒԱՆ ՀԱԿԱՊԱՏՄԱՆ ՄԵԿ ԿԵՑ

Մեր զրոց զիտէ՞ բաւակամ տարի վերջը ,  
ուսումնակամ կարեւոր խնդրոյ մի պատճառաւ ,  
ս. Մեսրովք կ'ողեւորի ի Կ. Պոլս իւր մի քամի  
աշակերտմերով : Սոյթ ճամասպարհորդութեամ  
միջոց՝ Մելիտիմէ քաղաքը կը համգիպի , եւ այս  
տեղ կը թողու իւր աշակերտմերը , որոց զիսա-  
տում էր Ղետոնէս կամ ս. Ղետոն երջան , եւ կը  
յանձնէ զամոմք մողե քաղաքի Ակակիոս եպիս-  
կոպոսիթ , իմաւէս կը վկայիմ զայս նորիս (տպ.  
Վենեսիկ , 1894 , էջ 27) եւ Մ. Խորենացի (Պ ,  
ծէ) : Սոյթ պատմագիրք , շարուակելով ս. Մես-  
րովք ուղեւորութեամ պատմութիւնը՝ կը հաս-  
ցումնեմ զայս միջնէն ի Բիւզանդոն , ուր կը ներ-  
կայանամ Թէոդոս Բ կայսէր եւ Աստիլոս հայ-  
րապետիմ : Եւ մերջիմս կը ծեռադպէ զս : Մես-  
րովք եկեղեսիկաթիկոս (Կոր.) կամ եկեղեսիաս-  
դիկոս (Մ. Խոր) :

Արդ տղմ պատմութեամ մէջ յայտնապէս վրի-  
պակ կամ հակասութիւն կայ . որովհետեւ սույզ  
եւ վաւերակամ պատմութիւններէ զիտեօք՝ թէ  
Աստիլոսի հայրապետութեամ միջոց կինդամայ  
յամն 406-425 կամ 426 , իսկ ս. Ակակիոս  
եպիսկոպոս եղեր է Մելիտիմոյ յամն 431-438 .  
որով յայտնի է թէ սաքա երկովք չիմ կարող  
ի մսիմ ժամանակի միամասամայթ եպիսկոպոս  
վիմել , մի՞մ Բիւզանդոնի եւ միւսմ՝ Մելիտիմոյ :

Ասդ լի՞բակէս կարեվի է բացատրել կամ լրւ-  
ապամել՝ մոյժ դիմաց ժամանակակից՝ մեր եր-  
կու պատմագրաց մէջ եւս գտնուած սոյթ դիմու-  
թիմ կէտոց :

Զ. ԿԵՐԱԿՈՒՐՔ Ա. Հ Հ Հ Հ Ա Ա Ա

Զգիտմեմ թէ մեր ազգագրակամ – հնակո-  
սակամ մասնագէտք թնու ոչ դարձուցի՞ր եմ  
այս մասիմ , թէ մեր նախնեաց ժամանակ լինչ  
տեսակ կերակութեր , խորենէմք , ամուշք , եւ  
այլ , գործածակամք էլմ , եւ ի՞նչ ամումներով  
կը կրուէմ : Արդեօք միմ ժամանակօքերու տղմ-  
տեսակամ կեմաց խամարարութեամ հետք կամ  
ծշմարք կ'երեւի՞լ արդի ժողովրդեամ տմակամ  
սովորութեանց մէջ :



## ՊԱՏԱՍԽԱՆ

Բ Ա Զ Մ Ա Վ Ի Պ Ի Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ Ի Ն

1. ԱՇԽԱՐՀԱԿԱՐԻ ԵԿ ԳՐԱԲԱՐԻ ԽՆԴԻՐ

(Զ. Դպաւասխան յանուարի Սուրհանդակի ա-  
ռաջին հարցման):

Կարդացի հետաքրքրութեամբ Բաշնչեռի  
փետրուար , ապրիլ և օգոստոս համարների  
մէջ զետեղուած պատասխանները , աշխարհա-  
բարի և գրաբարի ինդրի նկառումներ : Կը  
փափագէի այսաեղ և իմ համեստ կարծիքը  
յայնել՝ հրակիրելով ընթերցողի ուշադրու-  
թիւնը այս ամենակարևոր հարցի վրա : Պէտք  
է ասել , որ այս խնդիրը այնքան բարդ է և  
ծանրակշիռ , ներկայումն զրուած այն աեսակ  
պայմանների մէջ , որ գետ պահանջում է և  
հարկաւոր է զրա եկեղեցական լուծման և իրա-  
կանանալու համար՝ լուրջ և բազմակողմանի  
քննական ուսումնասիրութիւններ՝ լաւ քե-

բականագլւտ և հայկաբան բանասէրների կողմից : Ես կը դպոնամ միայն այն հարցին, թէ գրաբարը պէ՞տք է գործածական անել գրականուրեան մէջ :

Այդ հարցի մասին մեր համոզմնենքն այս է, թէ միանդամայն վասակար է գրաբարը լեզուն ի գրականուրեան գործածել ներկայիս մէջ : Գրաբարը լեզուն յաւակնուրիշն ունենալ այսօր յարոցանել իրենց կենաքաի բարբառ և գրականուրեան մէջ բնդիանուրին գործածական լեզու դարձնել, զա ծազրափի, նոյն իսկ անկարելի մի զաղափարի անհետիկութիւն է, որ մասց թէ նրան գործնականագիտեան առաջ մէջ կամ գործնական առաջ մէջ լուրջ բան է, եթէ ներկայից մի զար առաջ լինէր այդ . իսկ ներկայ ժամանակում ինչ միտց կամ առակելութիւն կարող է ունենալ այդպիսի սիսակ փորձը, երբ կես զարից աւելի է, որ գրաբարը աեղի տալով աշխարհաբարին՝ վերջինս է «տիրապետող» զարձել մեր զրականութեան մէջ<sup>1</sup> : Մենց, փոխանակ խորին զատողութիւն ունենալու, ուրոշ և ճննադատական լուսամիտ հայեացը իրերի և լիակատար ճանաչողութիւն մեր անցեալ և ներկայ կեանքի վրա, սկսում ենց զատիւ մակերևոյրապէս, մի զատապարակի վարմնեցով և սիսակ ուղղութեամբ թոյլ ենց տալիս մեղ լինել յետադիմական – պահպանողական և անհետատեսութեամբ անել մի այնպիսի «փորձ» գրաբարին գործածական զարձնելու նկատմամբ, որ բոլորովին թէ հակառակ է իրերի բնական ընթացքին՝ և թէ մաքառել

1. Այդ փորձը զէտէք մւը կը տանի մեջ . . . մի զար սրանից առաջ, այն ինչ ժամանակը առաջ է ընթանում, բոլովին թանկ է մեջ համար : Դա նշանակում է՝ իրերի բնական բնարացի հակառակ՝ մեր արդէն սովորած անցեալ ճանապարհի վրայով զնան մի զար յետ, և գրաբարի ներկայ գրականութեան մէջ գործածական դարձնելու համար՝ նորից սկսել աշխարհաբարի մասին արդէն սկսած : Ժամանակաւութիւն – սորչ ոչինչն է: Ան մտածեցէք, որ մեր զարսւէլ է հարկաւոր ժամանակի դարուս լուսատորուրեան ոգու և պահանձների համեմատ :

Է նշանակում յեղափոխական օրենքների դէմ : Մենց աշկարա տեսնում ենք, որ ժամանակը հետզհետէ առաջադիմում է և նրա ընթացքում միշտ առաջ են զալիս զանազանակիրպ և բազմատեսակ փոփոխութիւններ . ուրեմն ինչու «ժամանակի պահանջներից» յետ մնալ, կամ միթէ մենց կարող ենք խանդարել կամ կանգնեցնել ժամանակի գնացական պատուող անփլ կամ թէ իրերի բնական ընթացքը : Մեր զինաւոր պարտաւորութիւնը պիտի լինի այն, որ իրերի այժմեան դուռքիան լաւ ուսումնասիրելով ծառայենք ժողովրդին՝ նրա ժամանակից պահանձների համաձայն : Ահա թէ ինչու այնքան ժողովրդականուրիշն ստացան խաչատուր Արքվան, Նայրանդեան, Ստեփաննոս Նազարեան և Գրիգոր Աղօքրոնի, – չորսն էլ մոլուանգ վերանորոգիւմներ, վերանորոգութեան կոչուած մարզիկ, որոնց՝ որպէս «զաղափարական առաջադիմական կուսակցութեան» պարագնուիներ, լաշ, գիտակաբար ճանաչելով ժողովրդի վիճակը և նրա հասկացողութեան աստիճանը, սկսեցին իրանց սեփական ընդունակ խելցով և ուղեղի մի տառնձին թարունվեամբ արծարծել ժողովրդի մէջ մի շարք հիմնական մօղեր՝ և ծրագիրներ ժամանակի պահանձների համաձայն : Այդ նշանաւոր գործիչներն էին, որ տաշջին անզամ զինուեցին զրաբարի ոչմու ու մինչև վերջը պաշտպանեցին աշխարհաբարը մի տեսակ յամատուրեամբ և քաղաքական քաջուրեամբ, տարածելով նրան ժողովրդական խակերում, որպէս ողորկ և գրաչի լեզու : Դրա փառաւոր յաղթութեան ամենապերճախու ապացոյցը մինչև այս օր էլ կէս զարից աւելի երկում է մեր գրական մամուլի մէջ՝ հրատարակելով բոլոր մեր պարբերական թերթերը – լրագիրներ և ամսագրեր – աշխարհիկ լեզուով : Զարմանաի է, որ աշխարհաբարի վրա այսքան չանը և աշխատութիւններ ծափելուց ու կատարելագործութիւններ անելուց յետոյ՝ կամնում են ի զոր ժամանակատուրեամբ զրաբարի ընդհանուր ներմուծումը, այն է զրական ասպարիզում : Մինչ զեռ մի տեղ աշխատում են թարգմանելով կամ փոխա-

զրելով բարձր նրապական հեղինակների գրուածքները ժաղավրդին մատչելի լեզուով — աշխարհաբարով «հասկանալի» զարձնել, ուրիշ տեղ, ընդհակառակն՝ ուզում են մի այնպիսի «անհեռատես փորձ» անել, որ յանկարծ, անսպասելի կերպով, աշխարհաբարի ջնջերով կամ վերացնելով՝ զրաբարը ընդհանրանայ ամեն տեղ, այսինքն մի լեզու որ որբան «հնացած» է, այնքան էլ խորրացած և անհասկանալի է հայ ժողովրդին — թէ հասարակ է թէ միջակ զասակարգին, ուրեմն և մեծամասնորքեան:

Հարցնում ենք, ինչ է պատճառը, որ առ հասարակ այն զրբերը կամ հրատարակութիւններին են աւելի տարածվում ժողովրդի մէջ, որնոր գրուած են լինում պար և խստակ, ընդհանուրին մատչելի աշխարհիկ լեզուով, կամ աւելի լաւ է ասել՝ որոնք լինում են ժողովրդականացրած։ Այդ տեսակէտից նայերով՝ ներկայում առանձնապէս զովասանիք արձանի տեղ է բնում մեր կովկասեան երիտասարդութեան անդամներից մէկը — երիտասարդ ուսւ, մասամբ հայախօս բնագէտ Վակերիան Լոռիկիլի, որը յայտնի է մեր հասարակութեան իր բնագիտական ժողովրդականացրած աշխատութիւններով։ Հարցնում ենք, ինչո՞ւ Մագիստրոս Մսերեանցի իմբարզութեամբ երեմն հրատարակուող ձաւուուր ամսագիրը ժողովրդի իւաներում բոլորուին չը տարածուեց, որովհետեւ նա գրուած էր իրրին զրաբառով, հետևաբար ժողովրդին անհասկանալի։ Կամ ինչ է պատճառը, որ այսօր բարեպաշտ հայ ժողովուրզը հետոչետ գնալով սահշում է իր եկեղեցուց և նրա կրօնասիրական զբացումները թուանում։ Արդիհետև, կ'ասենք մենք, եկեղեցում կանգնում են ժամերով և լուս բահանայի աւետարանական զրաբար ընթերցումք, բայց ոչինչ են հասկանում, այլ կարծես միայն յօրանշում են և ննջում։ . . . Նոյն իսկ բահանաներից շատերը շեն կարողանում Աստուածաշնչի կամ Աւետարանի զրաբարի իսկ ողին ըմբռնելու իսկական հասկացողութիւնը աւենալ, ուր մաս թէ հասարակ ժողովուրզ։ Այդ սկզբունքի նկատմամբ Գրիգոր Արքունին

խորհուրդ էր տալիս Աւետարանը կամ ոուրբ զիրբը աշխարհաբար թարգմանելու և տարածելու ժողովրդի խաւերում։ Դա՛, մեր կարծիքով, համակրելի և երջանիկ յղացած միտք էր մեծն հրատարակախօսով կողմից. ինչո՞ւ համար այսօր ժողովրդին անյատ, անհասկանալի մեան աւետարանական և բրիտանէական վարդապետական գերեցին սկզբանցին եւ ո. Գրբի մարդարիտ գոհարները . . . Գրաբարը նախամերուպեան դարերում թէվէտ անուրանալի է, որ եղել է նախապատիւ և հայկական ոսկետիմիկի դարու լեզուն, բայց ու գործածական ընթանառութեան համար, ինչպէս կարծելի է այն հանգամանը, որ հարկադրեց այն մեծ գիտի անմահ հեղինակին զրել սուրբ զիրբը ժողովրդի մատչէլի լեզուվ. զրան ապացոյց՝ մեր բնիկ աշխարհում ապրող ժողովրդի բարեպատի մէջ գործածուած նրա պաւազած մնացորդները երևում են զեր ևս մինչև այսօր, օրինակ որոշչի բառերի և նախդիրների նախալաս գործածութիւնը՝ և նախդրով հայցականը, չ նախդրով տրականը և այս . . . իրոք նմուշ առաջ ենք բերում երկու նախակառութիւն, և դէ հոգեր յրիւաս վըր իմ գործնեն։ «գաղինք է Մոռչ . . .»

Աւեմն նկատելի է, որ այսօր ժողովրդը իր բնական ընթացքով փոխել է իր նախկին ստեղծած լեզուն, ինչպէս արդարացը նկատում է «Բանասէրը», Բայց վորի յուշն համարում, և օտարանալով իր նախկին զարգացած զիտովթեան ոճերից և ցերականական ձեռէկան կազմութիւնից՝ ստեղծելի է բոլորովին նոր լեզու՝ աշխարհաբար։ Որ աշխարհաբար լեզուն անշատուած է զրաբարից և տարազիր ժողովրդի բերանում բարազուած է օտարանուտ դարձուածքներով — այդ ճիշզ է։ Որ աշխարհաբարը իր թերութիւններն ուզղելու կամ լրացներու համար զիմելու է անշուշտ նրա աղքիրին — զրաբարին, — այդ էլ անմիտելի է։

«Բանասէրը» ամենայն իրաւամբ գրում է Բայց վորի յուշի մէջ տառապարձութեան ինդրում էջ Յաջ, թէ «նախնիք լեզուի հեղինակը չեն, այլ լեզուի հեղինակ կամ հնարին

ե ծողովորդին, որ ուզածին պէս իւր ստեղծած լցուի ծնունդը զարուց ի զարս կրնայ փոփոխել, անկախ որիցէ կանոնաց արգելումներէ, և այս պատմական իրողութիւնն մ'է որուն հակառակի չէ կարելի . . . Այսո, ժողովրդի հեղինակութիւնը բարձր է բան մատենագիրների ազգեցութիւնը։ Սակայն ինչպէս համերաշխուրիւն կամ համաճայնութիւն կայացնել ուստահայ և տաճկահայ բարբառների մէջ, այն է առեղծուածայինն մեծ տարբերութիւնը որ շատ անզամ մէկը միւսի համար զրաբարից էլ աւելի զժուար ըմբռնելի է Նոյն խսկ զասազրերի մէջ ցերականական ձեռքը զործ են ածկում զանազան կերպով, այնպէս որ վարանում է ուսուցիչը մի վճռական բացատրութիւն տալ հետարըբ-ըրուող աշակերտի հարցախորութեան, տարբեր կանոնների կամ ձեռքի մէջ ամենա-ճիշտը ընտրելու համար։ Լեզուի անմաքրութիւնը նկատելի է մանաւանդ մեր լրազդութեան մէջ։ Մշտի զործ է ածում վրա, ազատված, առաջարան։ Նոր դուռ և Աշխատուց — վրայ, ազատուած, յառաջարան։ Տ-րու, Ալքէ-րը. և Մո-րէն վրայ, ազատած, յառաջարան։ Մարդ զուարում է որ մէկին լիի։ Մեր կարծիքով, պէտք է կառարելազործան եերարկել, յոկէ, մաքրել, կանոնա-որկ և համերամատչելի դարձնել աշխարհարար շատ մշակուած քերականուրեան մի-ցոցով։ Յանկալի է մեր ազգայինների մէջ մի «ընդհանուր» կապու ստեղծել և համերաշխուրեամբ օրէնսդրական ձանապարհով մի անցակտելի միուրիւն։ Խնչի նման է մէկը զրում է, ասաց, հարցուց, միւսը՝ ասեց, հարցուց, մի ուրիշը ասաց, հարցրաց, և այլն։ կատարեալ բարելոնեան խառնակութիւն է տիրում մեր լեզուի մէջ։ Մեր

կարծիքով այժմեան պահանջուած քերակա-  
նութեան մէջ պէտք է ընդունուին հետևեալ  
ձեռքը, ա. որոնք գրաբարից չեն խորթացել,  
բ. որոնք յարմար են լեզուի ներդաշնակու-  
թեան և ամսորժութեան, և գ. որոնց, իրեւ  
վայելուչ կանոն ընդունուած են մեր արդի  
գրականութեան մէջ: Ձենց կարող մեր գո-  
հութինը չյայսնել և կանդուցեալ Ստե-  
փանոս Պալասանհեանին, որ այնքան ան-  
մոռանալի մեծ ծառայութիւններ մատուցեց  
աշխարհաբար լեզուի մշակութեան գործին:  
Բայց աշխարհիկ լեզուն շատ թերութիւններ  
ունի, պէտք է մշակել, կատարելազործել:  
Աշխատենք խօսուն և հանրամատնելի գարձ-  
նել քերականութեան և գրաբարի միջոցով  
այդ «անհրաժեշտ» լեզուն, որ թէ հասկա-  
նալի, դիրքը մրանելի է ժողովրդին, և թէ  
ին դարից առելի ընդունուած մեր արդի  
հայկական նորագոյն գրականութեան մէջ՝  
ժամանակակից պահանջների և իրերի բնա-  
կան ընթացքի համաձայն...

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԽԱՆ



ինչպէս Ե գարի հեղինակները դրաբար զեր-  
լիս Խոյ այն հարցը, թէ պէտք է բոլորովին  
անխնամ թողնել դրաբար լեզուն, որով մասե-  
նազդեցին և այնչափ ճիզն և քրաինք թափեցին  
մեր նախահայրեղը, գիտիք անընդհատ տառ  
և շրջու գարուց շրջանի մեջ. մենք բոլորովին  
համակարծիք հանենով «Բանահանու» խոհուն  
արամաբարունքն իրած պատասխանին (Տես  
փետրուար թիւ 2), կը կամենայինք՝ որ նա  
մար «միշտ հայկական հնազիտութեան իրբե  
մասնազիտական մի ճիզնը» իրբի սրբազն լե-  
զու և իրբե շտեմարան մեր նախնաեց բա-  
րյական և պատմական և մատենագրական եր-  
կասիրութեանց»: Այն, լոյն պէտք է ուրանալ և  
դրաբարի յարդը և նոխութիւնը, որովհետե  
նա և մեր այժմեան աշխարհաբարի հիմքը և  
առաջնորդը . . . :

4. Մեր կարծիքով, աշխարհաբար լեզուն  
պէտք է միսկիրպել, և դրա համար հարկաւոր է  
ունենալ մի անհերքիլի վատերական քերակա-  
նորժին. Կազմակիրած այնպիսի անկողնամ-  
պան սփստեմատիրական բացատրական կա-  
նոններով, որի համաձայն կարպանային առ-  
աջնարողութեան անպայման ամենայն դուռը՝ հե-  
ղինակ և խօսող համանման ուղղութեամբ,